[1] Դուրս գրման ամսաթիվ		
12	Դեկտեմբեր	2018 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
12	Դեկտեմբեր	2018 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	2612215085

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Անվանումը	«ԼՈՌՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր՝ Համար: Ամսաթիվ:
[20] Մատակարարման (առաքման) եղանակը	
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 34100317բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

12/12/2018 12:40:44

138

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

22 օգոստոսի 2018թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Գ.Հ.Թորոյանս, քննարկելով վարույթումս քննվող 34100317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի մայիսի 20-ին, ժամը 21:50-ի սահմաններում, Գյումրի քաղաքի բնակիչ Կարապետ Վրեժի Դեմիրճյանը, գտնվելով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանապահ ջոկատի «Բավրա» սահմանային վերահսկողության բաժնի անցակետում, հասարակական կարգը կոպիտ խախտելու դիտավորությամբ, դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք նշված անցակետի ծառայողների, սահմանը հատող քաղաքացիների, ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության Բավրայի բաժանմունքի ծառայողի նկատմամբ, շուրջ 30 րոպե տևողությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանապահ ջոկատի «Բավրա» սահմանային վերահսկողության բաժնի 3-րդ խմբի պետ, կապիտան Հովհաննես Խաչատուրի Պապոյանի, նույն խմբի ծառայող, ենթասպա Ռոման Ռոբերտի Եղոյանի, սահմանը հատող քաղաքացու՝ Հակոբ կարոյանի, ինչպես նաև անցակետում ծառայություն իրականացնող զինծառայողների և սահմանը հատող քաղաքացիների հասցեին, որը զուգորդվել է Ռոման Եղոյանի նկատմամբ բռնություն գործադրելով՝ նրա մարմնի տարբեր մասերին հարվածելով և իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով: Կարապետ Վրեժի Դեմիրճյանի խուլիգանական գործողությունները դադարեցնելու նպատակով միջամտել է Ռոման Եղոյանը, սակայն Կարապետ Դեմիրճյանը, չենթարկվելով վերջինիս կողմից հասարակական կարգի խախտումը դադարեցնելու օրինական պահանջներին, շարունակել է տալ սեռական բնույթի հայհոյանքներ և դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանապահ ջոկատի «Բավրա» սահմանային վերահսկողության բաժնի 3-րդ խմբի ավագ հսկիչի պաշտոնը զբաղեցնող Ռոման Եղոյանին՝ քաշքշել, հարվածել և հայհոյել է նրան:

Դեպքի առթիվ 26.05.2017թ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 34100317 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննությամբ պարզվել է, որ «Բավրա» սահմանային անցակետը համարվում է հատուկ ռեժիմային գոտի, որտեղ իրականացվում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետություն ելք ու մուտք անող մարդկանց, բեռների, տրանսպորտային միջոցների նկատմամբ: 2017 թվականի մայիսի 20-ին հիշյալ անցակետում հերթապահություն են իրականացրել ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատի «Բավրա» սահմանային վերահսկողության բաժնի 3-րդ խմբի զինծառայողներ, ենթասպաներ Մովսես Մնացականի Յավրումյանը, Ալյոշա Սամվելի Գալստյանը, Դավիթ Սամվելի Խանագյանը, Լևոն Հովհաննեսի Հակոբյանը, Հայկ Մարտինի Գրիգորյանը, Անդրեյ Սուրիկի Խաչատրյանը, Ռոման Ռոբերտի Եղոյանը, Գագիկ Միասնիկի Սարգսյանը, Արայիկ Սերժիկի Գաբրիելյանը, Աբրահամ Ռուբենի Դեմիրճյանը, Սարգիս Գրիգորի Սիմոնյանը և ավագ ենթասպա Արմեն Վարազդատի Վարդանյանը, հիշյալ խմբի պետ, կապիտան Հովհաննես Պապոյանի: Վերջիններս իրականացնում են փաստաթղթերի

ստուգում և ձևակերպում, ինչպես նաև տրանսպորտային միջոցների զննման վերակարգեր: 2017 թվականի մայիսի 20-ին, ժամը 20:50-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Պ.Սևակ 20 շենքի 7-րդ բնակարանի բնակիչ Կարապետ Վրեժի Դեմիրճյանը, վարելով իրեն պատկանող «Մերսեդես բենց» մակնիշի 35 AM 603 մակնիշի ավտոմեքենան, կնոջ՝ Հռիփսիմե Դեմիրճյանի հետ միասին, հիշյալ անցակետով Վրաստանի դաշնությունից մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն: Ճանապարհին մեքենայի ակը սկսել է իջնել: ՀՀ սահմանը հատելիս Կ.Դեմիրճյանը մեքենայի պատուհանից իր և կնոջ անձնագրերն ու ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը փոխանցել է հիշյալ զորքերի զինծառայող Դ.Խանագյանին: Փաստաթղթերի ձևակերպումն իրականացվել է սահմանված կարգով: Կ.Դեմիրճյանը Դ.Խանագյանից, այնուհետև մյուս զինծառայողներից ավտոմեքենայի անիվը փչելու համար պոմպ է ուզել: Սակայն նրան ասել են, որ իրենք չունեն, որ վերջինս կարող է գնալ գյուղ Բավրա, և այնտեղ մեքենայի անիվը նորոգել: Կ.Դեմիրճյանը սկսել է հայհոյանքներ հնչեցնել, ազգի, զինծառայողների հասցեին, ասելով, որ ինչի համար են անցակետը կառուցվել, որ իրեն պոմպ չեն տալիս, ինքը հայ ազգի համար է կռվել, իսկ իրեն պոմպ չեն տալիս: Զինծառայողների կողմից բազմիցս փորձեր է կատարվել Կ.Դեմիրճյանին հանգստացնելու, հանդարտեցնելու համար, սակայն վերջինս շարունակել է անկանոն վարքագիծ դրսևորել ու հայհոյանքներ տեղալ զինծառայողների հասցեին: Այդ ընթացքում սահմանը հատող Հակոբ Կարոյանը մոտեցել է Կ.Դեմիրճյանին և ասել, որ վերջինս հայհոյանքներ չանի, որ իր կինը մեքենայի մեջ է, ինչու պետք է նրա հայհոյանքները լսի: Վերջիններիս միջև սկսվել է վիճաբանություն, որի ընթացքում միմյանց մայրերի հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ են տվել, քաշքշել ու փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Զինծառայողները վերջիններիս բաժանել են, Հ.Կարոյանն իր մեքենայով հեռացել է: Վերջինիս հեռանալուց հետո Կ.Դեմիրճյանը նստել է իր ավտոմեքենան, որի ընթացքում տեսել է մեքենայի դիմացով անցնող Ռոման Եղոյանին և կնոջն ասել է, թե վերջինս իրեն մոր հասցեին հայհոյանք է տվել, այդ մտքից զայրացել է, իր ավտոմեքենայի առջև նստատեղերի միջև եղած դարակից վերցրել է դանակը, դրել աջ գոտկատեղին ու դուրս գալով մեքենայից սկսել է հայհոյանքներ տալ զինծառայողներին: Հռիփսիմե Դեմիրճյանը, տեսնելով, որ Ռ.Եղոյանը ինքնավստահ քայլերով առաջացել է դեպի ամուսինը, վախեցել է և մեքենայի դուռը բացելով՝ բղավել է, թե մոտը դանակ կա: Ռ.Եղոյանը տեսել է, որ Կ.Դեմիրճյանը աջ ձեռքը տարել է աջ գոտկատեղին, հանել է դանակը, ինքը հետ-հետ է գնացել ու վազքով փախել է, իսկ Կ.Դեմիրճյանը վազել է նրա հետևից, սակայն չի հասել Ռ.Եղոյանի հետևից: Այդ ընթացքում, երբ Կ.Դեմիրճյանը քայլելով վերադարձել է, կինը մոտեցել է նրան և վերցրել է դանակը: Դրանից հետո Կ.Դեմիրճյանը կրկին սկսել է հայհոյանքներ տալ զինծառայողներին, իսկ շուրջ 1-2 րոպե անց անցակետ են ժամանել ոստիկանության Աշոցքի բաժնի աշխատակիցները: Վերջիններս դժվարությամբ կարողացել են ձեռնաշղթաներ հագցնել Կ.Դեմիրճյանին և տեղափոխել ոստիկանության բաժին: Ոստիկանության բաժնում Կ.Դեմիրճյանը որևէ մեկին չուղղված հայհոյանքներ է տվել, անկանոն վարքագիծ է դրսևորել: Վերջինիս տեղավորել են բաժնի հերթապահ մասի պահման խցում: Նա սկսել է հարվածներ հասցնել խցի դռանը, որը այդ կերպ վնասելով բացել է: Ոստիկանության աշխատակիցները նրան տեղավորել են հաջորդ խցում: Վերջինս ոտքով հարվածներ է հասցրել նաև այդ դռանը, որը վնասել է, սակայն չի կարողացել բացել:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ին թիվ 34100317 քրեական գործով որոշում է կայացվել Կարապետ Վրեժի Դեմիրճյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այն բանի համար, որ նա 2017 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, <<Բավրա>> սահմանային վերահսկողության բաժնի անցակետում, դիտավորությամբ կոպիտ կերպով տևական ժամանակ խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, զուգորդվել անձանց նկատմամբ բռնություն գործադրելով և

իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ու հասարակական կարգի խախտումը խափանող անձանց՝ ոստիկաններին դիմադրություն ցույց տալով:

Այսպես.

2017 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, Կարապետ Վրեժի Դեմիրճյանն իր վարած <<Մերսեդես-Բենս>> մակնիշի ավտոմեքենայով գտնվելով <<Բավրա>> սահմանային վերահսկողության բաժնի անցակետում, օրենքը և հասարակության կողմից համընդհանուր ճանաչում ստացած բարոյականության նորմերն արհամարելու ներքին բավականության զգացումով, սեփական անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով մղված, ինքնահաստատման ձգտումով, շրջապատին և հասարակությանը հակադրվելու, հակազդելու ցանկությամբ, կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության ՀՀ <<Բավրա>> սահմանային անցակետը հատող քաղաքացիների ներկայությամբ, անհիմն վիճաբանել ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանապահ ջոկատի <<Բավրա>> սահմանահին վերահսկողության բաժնի 3-րդ խմբի պետ, կապիտան Հովհաննես Խաչատուրի Պապոյանի, նույն խմբի ծառայող, ենթասպա Ռոման Ռոբերտի Եղոյանի հետ, որի ընթացքում բռնություն գործադրելով քաշքշել և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Հովհաննես Խաչատուրի Պապոյանին, վերջինիս հասցեին տվել սեռական բնույթի խուլիգանական հայհոյանքներ: Այնուհետև դեպքի ժամանակ դեպքի վայր են ժամանել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Աշոցքի բաժնի օպերատիվ խումբի ոստիկաններ՝ Արտյոմիկ Հարությունյանը, Վասիլ Սուքիասյանը և Հմայակ Բոդոյանը և փորձել խափանել Կարապետ Դեմիրճյանի խուլիգանական գործողությունները՝ պահանջելով դադարեցնել սեռական բնույթի խուլիգանական հայհոյանքները և պահանջել ենթարկվել իրենց օրինական պահանջներին, սակայն Կարապետ Դեմիրճյանը շարունակելով իր գործողությունները չի ենթարկվել նրանց օրինական պահանջներին և դիմադրություն ցույց տալով վերջիններիս փորձել է դուրս պրծնել իր գործողությունները խափանող ցանկացող ոստիկանների ձեռքերից և շարունակել է իր խուլիգանական գործողությունները:

Կարապետ Վրեժի Դեմիրճյանի խուլիգանական գործողությունների հետևանքով խանգարվել է ՀՀ <<Բավրա>> սահմանային անցակետի բնականոն աշխատանքը և վերջինիս գործողությունները դադարել են միայն ոստիկանների կողմից նրա նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելու՝ գետնին պառկեցնելու և հատուկ միջոց ձեռնաշղթա կիրառելու ու ոստիկանության Աշոցքի բաժին բերման ենթարկելու արդյունքում:

Այսպիսով, Կարապետ Վրեժի Դեմիրճյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

Նախաքննության ընթացքում 20.07.2018 թվականին որոշում է կայացվել Կարապետ Վրեժի Դեմիրճյանի առաջադրված մեղադրանքը փոփոխելու և կրկին մեղադրանք առաջադրելու մասին և առաջադրվել է մեղադրանք, այն բանի համար, որ նա նա, 2017 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, <<Բավրա>> սահմանային վերահսկողության բաժնի անցակետում, դիտավորությամբ կոպիտ կերպով տևական ժամանակ խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, զուգորդվել որպես զենք օգտագործվող առարկայի՝ ապօրինի կերպով կրած սառը զենք հանդիսացող դանակի գործադրմամբ. բռնություն գործադրելու սպառնալիքով, անձանց նկատմամբ բռնություն գործադրելով և իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ու հասարակական կարգի խախտումը խափանող անձանց՝ ոստիկաններին դիմադրություն ցույց տալով:

Այսպես.

2017 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, Կարապետ Վրեժի Դեմիրճյանն իր վարած <<Մերսեդես-Բենս>> մակնիշի ավտոմեքենայով գտնվելով <<Բավրա>> սահմանային վերահսկողության բաժնի անցակետում, օրենքը և հասարակության կողմից համընդհանուր ճանաչում ստացած բարոյականության նորմերն

արհամարելու ներքին բավականության զգացումով, սեփական անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով մղված, ինքնահաստատման ձգտումով, շրջապատին և հասարակությանը հակադրվելու, հակազդելու ցանկությամբ, կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության ՀՀ <<Բավրա>> սահմանային անցակետը հատող քաղաքացիների ներկայությամբ, անհիմն վիճաբանել ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանապահ ջոկատի <<Բավրա>> սահմանահին վերահսկողության բաժնի 3-րդ խմբի պետ, կապիտան Հովհաննես Խաչատուրի Պապոյանի, նույն խմբի ծառայող, ենթասպա Ռոման Ռոբերտի Եղոյանի հետ, որի ընթացքում բռնություն գործադրելով քաշքշել և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Հովհաննես Խաչատուրի Պապոյանին, վերջինիս հասցեին տվել սեռական բնույթի խուլիգանական հայհոյանքներ, մեքենայի միջից՝ առջևի երկու նստատեղերի միջնամասում գտնվող դարակից վերցնելով սառը զենք հանդիսացող դանակը և ապօրինի կերպով գոտկատեղում՝ հագուստի տակ, այնուհետև ձեռքում կրելով՝ այն գործադրելով սպառնացել է դրանով բռնություն գործադրել վազել է Ռ.Եղոյանի հետևից, շարունակելով կոպիտ կերպով խախտել հասարարակական կարգը: Ահազանգով դեպքի վայր են ժամանել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Աշոցքի բաժնի օպերատիվ խմբի ոստիկաններ՝ Արտյոմիկ Հարությունյանը, Վասիլ Սուքիասյանը և Հմայակ Բոդոյանը և փորձել խափանել Կարապետ Դեմիրճյանի խուլիգանական գործողությունները՝ պահանջելով դադարեցնել սեռական բնույթի խուլիգանական հայհոյանքները և ենթարկվել իրենց օրինական պահանջներին, սակայն Կարապետ Դեմիրճյանը շարունակելով իր խուլիգանական գործողությունները չի ենթարկվել նրանց և դիմադրություն ցույց տալով վերջիններիս փորձել է դուրս պրծնել իր գործողությունները խափանող ցանկացող ոստիկանների ձեռքերից և շարունակել է իր խուլիգանական գործողությունները:

Կարապետ Վրեժի Դեմիրճյանի խուլիգանական գործողությունների հետևանքով խանգարվել է ՀՀ <<Բավրա>> սահմանային անցակետի բնականոն աշխատանքը և վերջինիս գործողությունները դադարել են միայն ոստիկանների կողմից նրա նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելու՝ գետնին պառկեցնելու և հատուկ միջոց ձեռնաշղթա, կիրառելու ու ոստիկանության Աշոցքի բաժին բերման ենթարկելու արդյունքում:

Այսպիսով, Կարապետ Վրեժի Դեմիրճյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

Քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք են բերվել փաստական տվյալներ, որ Կարապետ Վրեժի Դեմիրճյանը տառապում է <<Կայուն մնացորդային երևույթներ կրած գլխուղեղի տրավմայից հետ, էմոցիոնալ անկայունություն, հիշողության թուլացումով>> հիվանդությամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 34100317 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝ 143

- Մեղադրյալ Կարապետ Վրեժի Դեմիրճյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Կարապետ Վրեժի Դեմիրճյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Կարապետ Վրեժի Դեմիրճյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Կարապետ Վրեժի Դեմիրճյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Կարապետ Վրեժի Դեմիրճյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Կարապետ Վրեժի Դեմիրճյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետներին վերջիններիս պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Կարապետ Վրեժի Դեմիրճյանը:

Ավագ քննիչ՝ **Գ.Հ.Թորոյան**